# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մաղաքյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ն 72-Ա**

<<30>> մայիսի 2024 թվական                    քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ 2 ՇԵՆՔԻ ԹԻՎ 24 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՎՅԱԼ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ԵՊՐԱՔՍԻ ՅԱՇՖԻԴԱՆԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, 102-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Մարալիկ քաղաքի 2-րդ թաղամասի, 2-րդ շենքի թիվ 24 բնակարանը օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում տվյալ բնակարանի բնակիչների կո՛ղմից չի սեփականաշնորհվել և Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի Ն 51 որոշմամբ հաստատված Ն 7 հավելվածով պետական բնակելի ֆոնդը և պետական ոչ բնակելի տարածքները սեփականության իրավունքով փոխանցվել են համայնքներին, հիմք ընդունելով <<Հայաստանի ազգային արխիվ>> պետական ոչ առևտրային կազմակերպության Մարալիկի տարածքային ներկայացուցչության 17.05.2024թ Ն Մր-168 արխիվային տեղեկանքը, համաձայն որի Անիի շրջխորհրդի գործկոմի 1986 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 12 արձանագրության որոշմամբ Մարալիկ ավանի բնակֆոնդի 2-րդ թաղամասի թիվ 2 շենքի թիվ 24 երեք սենյականոց բնակարանը հատկացվել է Եպրաքսի Յաշֆիդանի Հակոբյանի 4 անձից բաղկացած ընտանիքին, հաշվի առնելով քաղաքացի Եպրաքսի Յաշֆիդանի Հակոբյանի 2024 թվականի մարտի 29-ի դիմումը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Մարալիկ քաղաքի 2-րդ թաղամասի, 2-րդ շենքի թիվ 24 երեք սենյականոց բնակարանը /կադաստրային ծածկագիր՝ 08-003-0026-0060-008-024, Վկայական՝ Ն 25042024-08-0051/ նվիրել տվյալ բնակարանում հաշվառված և փաստացի բնակվող քաղաքացի Եպրաքսի Յաշֆիդանի Հակոբյանի չորս անձից բաղկացած ընտանիքին:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված բնակարանի նկատմամբ համասեփականատեր ճանաչել Եպրաքսի Յաշֆիդանի Հակոբյանին /Անձնագիր՝ AV0275067, տրված՝ 22.06.2022թ, 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ Անի համայնք, քաղաք Մարալիկ 2-րդ թաղամասի, 2-րդ շենք, բնակարան 24/ Գագիկ Հովհաննեսի Հակոբյանին /Անձնագիր՝ AU0208952, տրված՝ 26.03.2021թ, 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ Անի համայնք, քաղաք Մարալիկ 2-րդ թաղամասի, 2-րդ շենք, բնակարան 24/ Խաչատուր Գագիկի Հակոբյանին /Անձնագիր՝ BA 3428264, տրված՝ 24.10.2018թ, 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ Անի համայնք, քաղաք Մարալիկ 2-րդ թաղամասի, 2-րդ շենք բնակարան 24/ և Արմեն Գագիկի Հակոբյանին /Նույնականացման քարտ՝ 1909840149, տրված՝ 18.11. 2016թ, 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ Անի համայնք, քաղաք Մարալիկ 2-րդ թաղամասի, 2-րդ շենք, բնակարան 24 /հետագայում՝ Նվիրառուներ/:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյանին.

ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Նվիրառուների հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր.

բ) Սույն որոշումից բխող իրավունքները օրենքով սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման՝ Նվիրառուների միջոցներով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ**

| | Կողմ- 11 | Դեմ – 0 | Ձեռնպահ – 0 |
|---|---|---|---|
| **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ** | ------------- | ------------ | -------------- |
| **Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ** | ------------- | ------------ | -------------- |
| **Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ** | ------------- | ------------ | -------------- |
| **Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ** | ------------- | ------------ | -------------- |
| **Ա. ՇԱԲՈՅԱՆ** | ------------- | ------------ | -------------- |
| **Հ. ՋԱՏԻԿՅԱՆ** | ------------- | ------------ | -------------- |
| **Ժ. ԱԼԵՔՅԱՆ** | ------------- | ------------ | -------------- |
| **Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ** | ------------- | ------------ | -------------- |
| **Ն. ՍԱՐՈՅԱՆ** | ------------- | ------------ | -------------- |
| **Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ** | ------------- | ------------ | -------------- |

Մ. ԵՆՈՔՅԱՆ ---------------- ---------------- ----------------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<30>> մայիսի 2024 թ.
քաղաք Մարալիկ